տիրույթում երբեմն «17-րդ դար»-ը կամ «ուշ միջնադարի»-ն մղվում են ետին պլան և ընդգծվում է «խոշորագույն պատմիչ»-ը, ինչն էլ իր հերթին, պայմանավորելով անխուսափելի կանխակալություն, Դավրիժեցու աշխատության թեկուզև ընթերցման ընթացքն ուղեկցում է որոշակի հիասթափություններով: Սա հոգեբանական բնույթի խնդիր է և բացատրելի է ընկալման նրբություններով: Այս դեպքում էլ հարցն այն է, որ ***պատմագրական երկ*** ժանրային հասկացությունն անպայման առթում է ընկալման երկու, բայց համադրական ու անտրոհելի մակարդակներ՝ պատմագիտական և գրական: Եվ եթե պատմագիտական առումով Դավրիժեցու երկը տարակույսներ չի թողնում և բարձր է գնահատվել նաև այլազգի ուսումնասիրողների, մասնավորապես՝ պատմաբանների կողմից[3], ապա գրական առումով, անկախ իր արժանիքներից, այդուհանդերձ, կարծես թե չի արդարացնում ***խոշորագույն*** տարազումը, քանզի աշխատության տեքստի ու կառույցի բնույթն այնպիսին է, որ ակամա մղում է զուգադրումների ավելի վաղ շրջանի, մասնավորապես՝ ոսկեդարյան պատմագրքերի հետ, որոնք միշտ չէ, որ Դավրիժեցու օգտին են: Այնինչ, իբրև առանձին համակարգ դիտարկելիս՝ «Գիրք պատմութեանց»-ը անուրանալի արժանիքներ ու ինքնատիպություններ է հանդես բերում նաև այդ հատույթում:

Վերը նշվածի առումով Դավրիժեցու աշխատությունն իր իրական նշանակությամբ ու արժեքով է ներկայացվում Լորետա Դանեղյանի հետևյալ պարզ բնութագրման մեջ, որն ամենից ընդունելին է, քանզի նրանում ոչ աբեղյանական՝ հաճախակի դրսևորվող քամահրանքը կա, ոչ էլ մյուսների չափազանցությունները. «Դավրիժեցին եղավ հայ միջնադարյան հարուստ պատմագրության վերջին խոշոր երախտավորը»[4]: Ընդհանրական այս ամփոփա-

---

[3] Այդ մասին մանրամասն տե՛ս ***Լորետա Դանեղյան***, Առաքել Դավրիժեցու երկը որպես Սեֆյան Իրանի XVII դարի պատմության սկզբնաղբյուր, Երևան, 1978:

[4] ***Լորետա Դանեղյան***, Առաքել Դավրիժեցու երկը որպես Սեֆյան Իրանի XVII դարի պատմության սկզբնաղբյուր, էջ 11: